

կեանք ունեցող բանի վախճանը : Ամեն բան կը ծաղկի ու պտուղ կու տայ . որ է ըսել ամեն կենսունակ մարմին կը զբունու կը սիրէ , և սիրոյն միջոցաւ 'ի մայրութիւն կ'ելլէ :

Բայց պէտք է յիշեցնել որ որորանը պատրաստելէն ետքը , բոյսին պաշտօնը կը լմննայ . ոչ թուխս կը նստի և ոչ կաժամբ կը մնուցանէ իր սերունդը . բուսոց մէջ մայրը որդին չճանչնար և ոչ որդին զմայրը : Եթէ տնկոց մէջ զային զգացողութեան երևոյթներ կը տեսնուին , միւս կողմանէ կը տեսնանք որ բարոյտկան զգացողութիւնը ոչինչ զարգացում ունի : Ի վերայ այսր ամենայնի մէկ քանի բուսոց վրայ բնութիւնը կարծես թէ մայրութեան զուարձութեանց ու պարտուց պատրաստականութիւն մը կը ցուցնէ : Կայ տունկ մը որուն սերմանքը մօրը վրայ կը ծլին ու կ'աճին , և միայն երբ իրենց անհատականութեան կատարելութիւնը կը ստանան այն ատեն անկէ կը բաժնուին : Հասարակածին ծովերուն եզերքները աճող տունկ մը ինքնիրեն իր բուն պըտուղը կը տնկէ , երբ ան իրեն բուն արմատիկներովը ժայռին կրնայ կաղիլ , ուսկից ջրին մակրնթացութիւնը ու տեղատութիւնը առանց արմատիկներուն՝ կրնային զան անկէ քաշել տանիլ : Եւ մանաւանդ մայրական ճիւղը զաւկէն չզատուիր՝ մինչեւ որ յետինս զետնին հետ ուժով չյարի :

Մաշկակապ փողացարը<sup>1</sup> և կռուպը<sup>2</sup>:

Այս սարսափելի հիւանդութեան , որուն տարուէ տարի այնչափ կեանք զոհ կ'ըլլան , յատուկ նշանն է որ կոկորդին վրայ մորթիկներ կամ սուտ մաշկեր կը ձեանան , կամ յանկարծորէն և կամ տարափոխիկ ախտիւ : Գըլխաւորաբար տղաքը կը բոնուին այս ախտէս , բայց հասակաւոր անձինք ալ ենթակայ են բոնուելու , և կրնայ ալ ախտը անձէ անձ փոխաղրուիլ :

1 Angine couenneuse.

2 Croup.

Կ'ըսուկի մաշկակապ փողացար , երբ մաշկերը , խողի ճարպի մաշկին շատ նման , կոկորդին երկու կողմը եղող գեղ ձերուն վրայ կը յայտնուին : Երբ մինչեւ հագաղը ձգին , այն ատեն ախտը կ'ըսուկի կուուպ . անոր համար մաշկակապ փողացաւը կրնայ նաև կռուպ փոխուիլ :

Շատ անդամ' այս ախտիս առջի նշանն երը հաղիւ կ'իմացուին . քիչ մը յերմ կը զգայ տղան , կլլելութժուարութիւն , դեղնագոյն դէմք , տկարութիւն : Զայնը խղդուկ կ'ըլլայ և զժուարին , և յետոյ ցաւով ստէպ հազ մը կը տիրէ վրան , կերկերաձայն և սուլող : Նաև շունչ առնելով այդ սուլուածքը կը լսուի , որ աւելի կարճ է և վշտացուցիչ : Այս շընչելու դժուարութիւնը կրնայ այն աստիճանի աճիլ , որ տղան խղդուելու մօտ երենայ . այն ատեն երեսը արեամբ կը լեցուի , աչքերը դուրս կը ցցուին . ախտացեալլ գլուխը դէպ 'ի ետեր կը ձգէ ու բերանը կը բանայ որ կոկորդէն դժուարաւ անցնող օղը ծծէ , ձեռքը ստէպ ստէպ կոկորդը կը տանի , ինչպէս թէ արգելք մը ուղենար անկէ հեռացնել . ջերմը սաստիկ կ'ըլլայ , և երակը տկար բայց երագ երագ կը զարնէ :

Հիւանդութեան տեղը և տեսակը քննելու համար՝ հիւանդը ճրագի մը առջեր դնելու է ու բերանը բանալ տալու է լեզուն դուրս հանել տալով : Գընիչը քիչ մը կողմնակի պէտք է կենայ որ բերնէն ելած արտաշնչութիւնը իրեն չզարնէ , յետոյ դգալով մը լեզուն վար ճնշելով , կոկորդին վրայ ձեացած ճերմակ մաշկերը պէտք է դիտէ : Ծնօտին երկու կողմը արեան յորդութիւն մը կը տեսնուի :

Հիւանդութիւնը ստուգուածին պէս պէտք է բժիշկը կանչել : Եւ որովհետեւ հիւանդութիւնը փոխաղրականէ , պէտք է զդուշութեամբ դգալը քացախով լուալ , և նաև զիտողը բերանը քացախով ցօղուել :

Մաշկերուն ներկայութիւնը , նշանաց հետղհետէ շատնալլ , զիին գեղձից արեամբ լցուիլլ , խղդուկ և կէս մը մարած ձայնը , յայտնի նշաններ են չզիո-

թելու այս կռուպ հիւանդութիւնս սրա ձայն հագազախտին<sup>1</sup> հետ, որ յանկար ծական երևան կ'ելլէ, ու կոկորդին խորը պարզ կարմիութիւն մը կը պատճառէ:

Մինչև որ բժիշկը համնի՝ պէտք է ախտացելոյն սրունքներուն վրայ մանանիսի կամ քացիսի սպեղանիք<sup>2</sup> դնել, ջերմ սպունդ մը վզին վրայ պլել, և թեերը քափուրախառն ալքոոլով շփել: Ասով ախտը քիչ մ'որ թեթենայ, պէտք է ախտացելոյն փսխողական մը տալ, որուն ազդելէն ետքը, հիւանդը պէտք է աղէկ ծածկել ու մոլոշի, տիլիայի ծաղկի կամ ուրիշ կակզեցուցիչ խոտերու ջուրը մերթ ընդ մերթ խմցընել: Բայց տղրուկ ամեննեին գործածելու չէ:

Բժշկին ընելի գործողութիւնն է անցք մը բանալ չնչափողին վրայ որ օդը թռիքերը կարենայ թափանցել: Այս գործողութիւնս դիւրին է, և փորձը օգտակար ցցուցած է, որովհետեւ ասով ախտացելոց հնգին մէկը կ'ազատի: Որչափ ալ երկիւղալի երենայ ծնողաց այս գործողութիւնս, պէտքը չէ ամեննեին հակառակելով չհաւանիլ:

### Զուարք մարդուն օգնութիւնը երկընքեն է:

Առաքինի մարդու մը յատկութիւնը զուարթութիւնն է, որ վրան՝ ինչպէս արեւուն պայծառութիւնը՝ անանկ կը փայլի: Քաղցրահայեաց գէմքի մը ուրախութիւնը դուրս կը զեղու ու չորս կողմը կեցողներուն կ'անցնի: Նաև խիստ ու լուրջ ընաւորութիւն ունեցող մը՝ շարունակ զուարթ մարդու մը կենակցութեամբը կ'ամօքի կը քաղցրահայ: Տիրութիւնը կարող չէ զուարթ խօսակցութիւն մը և անուշ ժպիտ մը յաղթահարելու, ինչպէս և ոչ մառախուզը, ամպերն ու դոլորշիները՝ կարող են

արեւուն լցոյար խափանելու որ տեսարանի մը վրայ չզարնէ: Միշտ զուարթ եղիք. վասն զի յարատեւ ուրախ բնաւութիւն մը ամեն ճամբայ դիւրին կ'ընէ, և ամենն ծանրութիւն թեթեն: Երբեմն նաև այն մարդը որ լաւագոյն խառնուածքի տէր է դժուարաւ կրնայ հանգարատ և զուարթ երևոյթ մը ունենալ. սակայն այս գժուարութիւնը կը վերնայ եթէ մտածելու ըլլայ որ տիւրութիւնը և յուսահատութիւնը միայն փուշերը և վիշտերը աճեցնելու կարող են: Նախախնամութիւնը թէ բարւոյն և թէ չարին թոյլ կու տայ որ վրանիս գայ, և նոյն իսկ չարկքը մեզի օգտակար կ'ըլլայ եթէ անոր փորձառութեան դասով վը շահինք. ինչու համար ուրեմն հանգարատ ոգւով չարկը ըլնդունինք, նուաճելով ասով անոր խայթը: Ի՞նչ բանի կու գան դաժանաբարոյ բարբը, կիրքը, տիւրութիւնը: Եթէ հիւանդ ենք, առողջանալու յոյսը մեզի խրախոյս ըլլայ: Եթէ դժբաղդութենէ մը զարնուինք, յաջող ապագայի մը զուարթ նախատեսութիւնները մեզի միսիթար ըլլան. Եթէ մահը մեր սիրելիներէն մէկը մեզմէ առնէ տանի, մտածենք որ անոնք այն երջանկութիւնը վայելելու զնացին, ուր մենք ալ պիստոր երթանք անոնց մասնակից ըլլալու ցյաւիտեան: Զուարթ եղիք, եթէ ոչ գոնէ միայն ձեր շահուն համար: Այս կերպով լաւապէս կը կատարէք ձեր ամենայն պարտքերը և դիւրագոյն կերպով կը տանիք ամենայն ծանրութեան: Զուարթութիւնը՝ ձեր միայնութեան միսիթարը կ'ըլլայ, և իբր անցագիր մը կամ յանձնաբարական մը կը ծառայէ ընկերութեան մը մէջ: Զարմարդը, ախտաւորը, կրնան երկդիմի զուարթ բնաւորութիւն մը ձեացնել, սակայն քիչ անգամ կամ երբեք կարող չեն իրապէս զուարթ ըլլալու: Բնական զուարթութիւնը աննենդ ոգւոյ մը և բարեսէր սրտի մը յայտնի նշանն է:

1 Laringite aigue.

2 Cataplasme.